Հոդվածի հղումը. Մկրտչյան Տ. (2023), Երիտասարդների միջազգային միգրացիայի հիմնախնդրի շուրջ. գլոբալ մարտահրավեր և հնարավորություններ, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 3(3), 155-172, DOI: 10.52174/29538114_2023.3-155
Ներկայացվել է խմբագրություն՝ 25.11.2023 թ.
Ուղարկվել է գրախոսության՝ 07.12.2023 թ.
Երաշխավորվել է հրապարակման՝ 25.12.2023 թ.

ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0001-5053-6303

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ. ԳԼՈԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գլոբալ աշխարհի ամենաարտահայտիչ դիմագիծը բնակչության միգրացիայի ահագնացող տեմպերն են, որի գլխավոր շարժառիթներն են տնտեսական, սոցիալական և ժողովրդագրական հիմնախնդիրները, պետական ինստիտուտների նկատմամբ վստահության պակասը կամ բացակայությունը, պատերազմներն ու հարկադիր տեղահանությունները, բռնություններն ու անվտանգային խնդիրները, կլիմայական փոփոխություններն ու շրջակա միջավայրի դեգրադացիան: Ներկայում հիմնախնդրի ամենավտանգավոր դրսևորումներից է երիտասարդների, հատկապես երիտասարդ որակյալ աշխատուժի արտագաղթը՝ «ուղեղների արտահոսքը»: Երիտասարդների արտագաղթի հիմնական դրդապատճառներն են հայրենիքում արժանապատիվ աշխատանքի բացակայությունը, իրենց և իրենց ընտանիքների համար արժանապատիվ կյանք ապահովելու անհնարինությունը, հայրենիքում ապրելու ապագայի անորոշությունը, ավելի որակյալ կրթություն ստանալու ցանկությունը, ինքնաիրացման և աճի հնարավորությունների բացակայությունը, վարկերը և պարտքային պարտավորությունները, ամուսնությունը և անձնական կապերը, մշակույթը և տարիքային հասունացումը, պատերազմները և հակամարտությունները:

Սույն հոդվածում իրականացվել է երիտասարդների արտագաղթի պատճառների և արտագաղթի ծագման երկրների կողմից դրա կանխարգելման ու հետ վերադարձի ապահովման պետական քաղաքականությունների համաշխարհային փորձի վերլուծություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երիտասարդների միգրացիան բոլոր կողմերի համար երկակի ազդեցություն ունեցող գործընթաց է, ծագման երկրների կողմից երիտասարդների արտագաղթի կարգավորման արդյունավետ քաղաքականության շնորհիվ երիտասարդների միգրացիան մարտահրավերից կարելի է կերպափոխել հնարավորության: Այդպիսով՝ հոդվածում ներկայացվել է ինչպես երիտասարդների արտագաղթը կանխելու և արտագաղթածների վերադարձն ապահովելու, այնպես էլ «ուղեղների արտահոսքը» «ուղեղներից օգուտի» վերածելու և «ուղեղների շրջանառության» ապահովման պետական քաղաքականությունների միջազգային փորձը:

Հիմնաբառեր. *երիտասարդների միգրացիա, ուղեղների արտահոսք, երիտասարդների միգրացիայի կարգավորման պետական քաղաքականություն*
JEL: F22, R23
DOI: 10.52174/29538114_2023.3-155

Ներածություն: Ամբողջ աշխարհում երիտասարդների միգրացիան շարունակում է մնալ հասարակության առջև ծառացած կարևորագույն հիմնախնդիրներից մեկը: Արժանապատիվ կյանքի հնարավորությունների բացակայության, աղքատության և գործազրկության, կոռուպցիայի, քաղաքական և ռազմական բախումների, կլիմայի փոփոխությունների պատճառով վերջին երեք տասնամյակների ընթացքում աշխարհում կտրուկ աճել է իրենց հայրենիքից հեռու բնակություն հաստատած երիտասարդների թիվը: Միջազգային միգրացիան երիտասարդների առջև նաև լայն հորիզոններ է բացում՝ աշխարհը ճանաչելու, ավելի բարեկեցիկ կյանքի, արժանապատիվ աշխատանքի, ավելի լավ կրթության, մասնագիտական հմտությունների կատարելագործման և առաջխաղացման, ինքնահիրացման և ինքնահարգանքի պահանջմունքների բավարարման համար: Այս համատեքստում, վերջին տարիներին երիտասարդների միգրացիան սկսել են դիտարկել ոչ միայն որպես մարտահրավեր, որն ունենում է ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական և մշակութային ազդեցություններ թե՛ ծագման և թե՛ ընդունող երկրների տնտեսությունների համար, այլև հնարավորություն:

Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել երիտասարդների արտագաղթի հիմնախնդիրը ոչ միայն որպես մարտահրավեր, այլ նաև հնարավորություն՝ ցույց տալով, որ եթե պետությունները ձախողվում են երիտասարդների արտագաղթը ծնող խնդիրները շտկելու ճանապարհով դա կանխարգելելու հարցում, ապա կարող են օգուտներ ստանալ արտերկրում գտնվող այդ ներուժը ինտերնալացնելու միջոցով: Այլ կերպ ասած՝ երիտասարդների արտագաղթի միջոցով պետությունը կարող է տնտեսությունում ձևավորված «արտամղման էֆեկտը» վերածել «ներմղման էֆեկտի»:

Գրականության ակնարկ: «Երիտասարդ» եզրույթի հստակ բացատրությունը գրականության մեջ բացակայում է: Ըստ ՄԱԿ-ի մեթոդաբանության՝ երիտասարդությունը ներկայացվում է որպես կախյալ մանկությունից անկախ չափահասության անցման ժամանակաշրջան: Դա է պատճառը, որ երիտա-

սարդությունը՝ որպես կատեգորիա, ավելի հեղհեղուկ է, քան մյուս տարիքային խմբերը: Այս խմբի տարիքը սահմանելու ամենահեշտ ձևը կրթության և զբաղվածության հետ կապելն է, քանի որ «երիտասարդ» համարվում է այն անձը, ով ավարտել է պարտադիր կրթությունը և գտել իր առաջին աշխատանքը[1]: Տվյալների ձեռքբերման և վիճակագրության վարման նպատակներից ելնելով՝ ՄԱԿ-ը և Գլոբալ միգրացիայի խումբը «երիտասարդ» կատեգորիայում ներառում են 15–24 տարիքային խմբի մարդկանց՝ միևնույն ժամանակ, չբացառելով, որ տարբեր երկրներ կարող են կիրառել իրենց նախընտրելի մեթոդաբանությունը[2]: Ըստ ԵՄ Երիտասարդության ռազմավարության՝ երիտասարդ են համարվում 13–30 տարիքային խմբին պատկանող անհատները[3]: Ըստ Աֆրիկյան միության երիտասարդության խարտիայի՝ երիտասարդ է համարվում 15–35 տարեկան ցանկացած անձ[4]:

Ինչ վերաբերում է «երիտասարդների միգրացիա» եզրույթին, ապա գրականության մեջ դա ներկայացվում է որպես շարժունության դրսևորում, որը տեղի է ունենում 15–29 տարեկանում դեպի չափահասություն անցման ընթացքում՝ ուղեկցվելով անհատականության, ընտանեկան և սոցիալական կերպափոխումներով[5]: Երիտասարդների միգրացիան անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես գլոբալ մարտահրավեր, այլև հնարավորություն: Ըստ Գլոբալ միգրացիայի խմբի զեկույցի՝ միգրացիան լայն հնարավորություններ է ստեղծում երիտասարդների համար՝ խթանելով նրանց արտադրողական մասնակցությունը հասարակական կյանքին, նպաստելով մասնագիտական առաջխաղացմանը և ընտանիքների ձևավորմանը[6]: Որոշ հետազոտություններ ցույց են տալիս նաև, որ երիտասարդները բարձր հարմարվողականություն ունեն նոր միջավայրի նկատմամբ, որի շնորհիվ ձևավորում են սոցիալական ցանցեր իրենց ծագման և բնակության երկրների միջև[7]: Միևնույն ժամանակ, դրանք վկայում են, որ երիտասարդների միգրացիան կազմաքանդող ազդեցություն է ունենում երիտասարդների ինքնության, կրթական վերջնարդյունքների և եկամուտների վրա հատկապես այն դեպքե-

---

[1] Տե՛ս Definition of youth, https://www.un.org/esa/socdev/documents/youth/fact-sheets/youth-definition.pdf

[2] Տե՛ս Global Migration Group, Migration and Youth: Challenges and Opportunities, Geneva, 2014, էջ 5, https://unesdoc.unesco.org/in/documentViewer.xhtml?v=2.1.196&id=p::usmarcdef_0000227720&file=/in/rest/annotationSVC/DownloadWatermarkedAttachment/attach_import_e8402379-4fb0-4a41-8473-a1476fb8edeb%3F_%3D227720eng.pdf&locale=ru&multi=true&ark=/ark:/48223/pf0000227720/PDF/227720eng.pdf#%5B%7B%22num%22%3A14%2C%22gen%22%3A0%7D%2C%7B%22name%22%3A%22XYZ%22%7D%2C-58%2C850%2C0%5D

[3] Տե՛ս European Commission, SEC (2011) 401 Commission Staff Working Document on EU Indicators in the Field of Youth, Brussels: European Commission, էջ 2, https://ec.europa.eu/assets/eac/youth/library/publications/indicator-dashboard_en.pdf

[4] Տե՛ս African Union, African Youth Charter, Addis Ababa, 2006, էջ 3, https://au.int/sites/default/files/treaties/7789-treaty-0033_-_african_youth_charter_e.pdf

[5] Տե՛ս **Belmonte M., Conte A., Ghio, D., Kalantaryan S., McMahon S.,** Youth and Migration: an overview, Luxembourg: Publications Office of the European Union, 2020, էջ 8:

[6] Տե՛ս Global Migration Group, Migration and Youth: Challenges and Opportunities, 2014, Geneva, Chapter 6, էջ 5:

[7] Տե՛ս **Raffaetà R., Baldassar L., Harris A.,** Chinese Immigrant Youth Identities and Belonging in Prato, Italy: Exploring the Intersections Between Migration and Youth Studies, Identities: Global Studies in Culture and Power 2015, էջ 11-12:

րում, երբ արտագաղթը տեղի է ունենում դեպի այնպիսի երկրներ, որտեղ նրանք չեն ձևավորել սոցիալական և ընտանեկան ցանցեր[8]:

Հիմնախնդրով զբաղվող հետազոտողները նաև պնդում են, որ միգրացիայի փորձը մեծացնում է հայրենիքում քաղաքական փոփոխություններ իրականացնելու երիտասարդների հակվածությունը և ցանկությունը: Օրինակ՝ երիտասարդ միգրանտների վերադարձի և Մալիի տեղական իշխանության մարմինների ընտրություններին ընտրողների մասնակցության մակարդակի միջև կապերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոչ աֆրիկյան երկրներից վերադարձողները հայրենիքում պրոպագանդում են քաղաքական կյանքին մասնակցության կարևորությունը, որը դրական փոփոխություններ է առաջ բերել ընտրողների վարքագծում[9]: Կան նաև հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ երիտասարդների համար արտագաղթի բաց դռների քաղաքականությունը կարող է բարելավել ծագման երկրներում ժողովրդավարացման մակարդակը: Օրինակ՝ Թուրքիայից արտագաղթը դեպի ԵՄ և ՏՀԶԿ երկրներ մեծացրել է կանանց տեսակարար կշիռը Թուրքիայի խորհրդարանում՝ այդպիսով ծառայելով որպես կանանց դերի ուժեղացման և գենդերային հավասարության կատալիզատոր: Ներքին միգրացիան կարող է նաև հանգեցնել քաղաքական գործընթացներին ներգրավվածության մեծացման: Բուրկինա Ֆասոյում երիտասարդ հովիվները, որոնք յուրացրել էին քաղաքային կյանքի նոր բարքերը, 2014 թվականի ժողովրդական ապստամբությունների առաջնագծում էին[10]:

Ընդհանուր առմամբ, տնտեսությունների վրա երիտասարդների արտագաղթի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունները բավականին խորն են և հաճախ՝ երկարաժամկետ ու դժվար հաղթահարելի[11]: Երիտասարդների արտագաղթի հնարավոր դրական էֆեկտներ կարելի է համարել ավելի արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների ձևավորումը և աշխատաշուկայի վրա աշխատուժի ավելցուկի ազդեցությունների մեղմումը, ավելի որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները և գիտելիքները հայրենիքին ծառայեցնելը, տրանսֆերտների աճի շնորհիվ տնտեսական աճի խթանումը, աղքատության մակարդակի կրճատումը, մարդկային կապիտալի զարգացումը, սփյուռքի շնորհիվ տեխնոլոգիաների փոխանցումը, ներդրումների և վենչուրային կապիտալի աճը, որակյալ աշխատողների վերադարձի և նույնիսկ «վիրտուալ վերադարձի» դեպքում հմտությունների փոխանցումը և օտարերկրյա ցանցային կապերի ստեղծումը: Երիտասարդների արտագաղթի հնարավոր բացասական էֆեկտներն են. ժողովրդագրական խնդիրները և բնակչության ծերացումը, պետության սոցիալական ծախսերի աճը, մարդկային կապիտալի կորուստը, տնտեսական աճի և արտադրողականության աճի տեմպերի դանդաղումը, գործոնային արտադրողականության կրճատումը, եկամուտների անհավասարության խորացումը,

---

[8] Տե՛ս **Belmonte M., Conte A., Ghio, D., Kalantaryan S., McMahon S.,** նշվ. աշխ., էջ 4-5:

[9] Տե՛ս **Hall S.,** Youth, Migration and Development: A New Lens for Critical Times, KNOMAD PAPER 41, 2022, էջ 37-38:

[10] Տե՛ս նույն տեղը:

[11] Տե՛ս **Atoyan R., Christiansen L., Dizioli A., Ebeke Ch., Ilahi N., Ilyina A., Mehrez G., Qu H., Raei F., Rhee A., Zakharova D.,** Emigration and Its Economic Impact on Eastern Europe, IMF Staff Discussion Note, July 2016:

ֆինանսական կայունության ռիսկերի առաջացումը, զբաղվածների հարկային բեռի մեծացումը:

Բնակչության միգրացիայի պատճառների վերաբերյալ առկա է մեծածավալ գրականություն, որտեղ մատնանշված միգրացիայի պատճառները բազմաթիվ են և բազմազան, որոնց դրսևորման առանձնահատկություններով է նաև պայմանավորված միգրացիոն հոսքերի մասշտաբը, ձևը, ուղղությունը և ժամկետը: Միգրացիայի շարժիչ ուժերը բաժանվում են մակրո-, միկրո- և մեզոմակարդակների գործոնների, որոնց համատեղ ազդեցությամբ է անհատը կայացնում գաղթելու որոշում (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Միգրացիայի մակրո-, միկրո- և մեզոմակարդակների շարժառիթները***[12,13]

Ըստ էության, այս մոտեցման համաձայն, նշված գործոնները պայմանավորում են ինչպես արտագաղթը, այնպես էլ ներգաղթը, ուստի, կարելի է ասել, որ այն է. Լիի կողմից առաջարկված միգրացիայի «քաշիր-հրիր» (Puss-Pull) տեսության մոդիֆիկացված տարբերակն է: Մակրոմակարդակի գործոնները միգրացիայի հիմնական շարժիչ ուժերն են, որոնք կապված են սոցիալ-տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական և շրջակա միջավայրի իրավիճակի հետ և հիմնականում անհատի վերահսկողությունից դուրս են: Տնտեսական գործոնների շարքում կարևորվում է զբաղվածության և արժանապատիվ աշխատավարձի խնդիրը: Սոցիալական բնույթի շարժիչ ուժերը երբեմն ձևավորվում են ընտանիքում և հասարակությունում, հաճախ պայմանավորում են անհատի կարգավիճակը՝ այդպիսով ձևավորելով «միգրացիայի մշակույթ»: Արտագաղթելու շնորհիվ պատերազմների ծանր հետևանքներից

[12] Տե՛ս **Castelli F.,** Drivers of Migration: Why do People Move? Journal of Travel Medicine, 2018, էջ 3:

[13] Տե՛ս **Czaika M., Reinprecht C.,** Drivers of Migration: A Synthesis of Knowledge, IMI Working Paper Series 2020, No. 163, էջ 6:

խուսափելու և աղքատության ճիրաններից ազատվելու ամենափոքր հնարավորություններն ունի հասարակության ծայրահեղ աղքատ հատվածը, ում լավագույն այլընտրանքը միայն հարևան երկիր տեղափոխվելն է: Միկրոմակարդակի գործոններն, ինչպիսիք են կրթական մակարդակը, կրոնը, լեզուն, ամուսնական կարգավիճակը և միգրացիայի փորձը, առանցքային դերակատարություն ունեն անհատի՝ հայրենիքից հեռանալու կամ մնալու վերջնական որոշման մեջ: Մեզոմակարդակի գործոնները սփյուռքի հետ կապերի միջոցով ազդում են այլ երկրներում կյանքի պայմանների մասին մարդկանց տեղեկացվածության մակարդակի վրա՝ դրանով իսկ մեծացնելով արտագաղթի գրավչությունը:

Հետազոտության մեթոդաբանություն: Չնայած տարբեր երկրներում երիտասարդների միջազգային միգրացիայի հիմնախնդրի վերաբերյալ իրականացված հետազոտությունների բազմազանությանը՝ դրա շարժառիթներն ու տնտեսությունների վրա ազդեցությունն ամբողջությամբ հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ հավաստի և համադրելի տեղեկատվությունը դեռևս սահմանափակ է: Ուստի, երիտասարդների միջազգային միգրացիայի գլոբալ հիմնախնդիրը հետազոտելու և վերլուծելու միակ ճանապարհը մնում է ըստ առանձին երկրների և տարածաշրջանների իրականացված ընտրանքային հետազոտությունների արդյունքների համեմատությունը և ամփոփումը, որոնք երբեմն, կիրառված մեթոդաբանության տեսանկյունից, համադրելի չեն: Այդ համատեքստում, սույն հետազոտության իրականացման նպատակով, կիրառվել են նկարագրական և համեմատական վերլուծության մեթոդները: Երիտասարդների միջազգային միգրացիայի առաջացման պատճառների և արտագաղթի կանխարգելման ու վերադարձի ապահովման պետական քաղաքականությունների միջազգային փորձը ներկայացնելու համար ընտրվել և համեմատվել են այնպիսի երկրներ, որտեղից վերջին տասնամյակում, տնտեսական դրդապատճառներով պայմանավորված, աճել են արտագաղթի տեմպերը: Ընդ որում, արտագաղթածների մեծամասնությունը 20–39 տարեկան, համեմատաբար բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդներ են. արտագաղթը եղել է երկարաժամկետ, կայուն, իսկ վերադարձածների թիվը՝ փոքր:

Հետազոտության ընթացքում կիրառվել է ինդուկցիայի մեթոդը, ըստ որի՝ տարբեր երկրներում երիտասարդների միգրացիայի կարգավորման պետական քաղաքականությունների հաջողված փորձի վերլուծության հիման վրա ներկայացվել են միգրացիայի ծագման երկրում երիտասարդների արտագաղթի պետական քաղաքականության հիմնական ուղղություններն ու գործիքակազմը, որոնք կարող են ուղեցույց դառնալ մեր հանրապետությունում ոլորտի կարգավորմամբ զբաղվող գերատեսչությունների և քաղաքականություն մշակողների համար:

Կիրառվել է ընդհանրացման մեթոդը, որը հնարավորություն է տվել համակարգելու և դասակարգելու երիտասարդների արտագաղթի կանխարգելման, վերադարձի ապահովման և «ուղեղների շրջապտույտի» ապահովման պետական քաղաքականությունների հիմնական ուղղությունները և դրանք ներկայացնելու «նպատակ – թիրախ – գործողություն» տրամաբանական շղթայով:

Վերլուծություն: 2022 թ. միգրացիայի համաշխարհային զեկույցի համաձայն՝ 2020 թ. աշխարհում միջազգային միգրանտների թիվը հասել է գրեթե 281 միլիոնի, որը կազմել է աշխարհի բնակչության 3.6%-ը: Վերջին 30 տարիների ընթացքում հայրենիքից հեռու ապրող մարդկանց թիվն աճել է մոտ 128 միլիոնով: Եվրոպան միջազգային միգրանտների առաջին (87 մլն միգրանտ. միջազգային միգրանտների ընդհանուր թվի 30.9%-ը), իսկ Ասիան (86 մլն միգրանտ. միջազգային միգրանտների ընդհանուր թվի 30.5%-ը) երկրորդ նպատակակետն է[14]: Ամենաշատ արտագաղթած բնակչություն ունեցող պետությունը Հնդկաստանն է՝ 18 մլն, երկրորդը՝ Մեքսիկան՝ 11 մլն, երրորդը՝ ՌԴ-ն՝ 10,8 մլն, իսկ չորրորդը՝ Չինաստանը՝ 10 մլն[15]:

Ըստ ՄԱԿ-ի վիճակագրության՝ 2020 թ. հայրենիքից հեռու ապրող 15–34 տարեկան միգրանտների թիվը հասել է 90 մլն-ի (միջազգային միգրանտների 32%-ը), որոնց 36%-ը 15–24, իսկ 64%-ը 25–34 տարիքային խմբից են: Ընդ որում, 1990–2020 թթ. 15–24 տարեկան երիտասարդ միգրանտների թիվն աճել է 43.4%-ով՝ 22.1 մլն-ից հասնելով 31.7 մլն-ի, իսկ 25-34 տարեկաններինը՝ 83%-ով՝ 30.1 մլն-ից դառնալով 55.8 մլն[16]: Ընդ որում, 15–24 տարեկան բոլոր միգրանտների 43%-ը և 25–34 տարեկանների 37%-ն արտագաղթել են ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներից:

Տարբեր երկրների տվյալների ուսումնասիրությունը փաստում է, որ երիտասարդների արտագաղթելու որոշմանն առաջին հերթին նպաստում են տնտեսական, սոցիալական և քաղաքական գործոնները, որոնք ամենավառն արտահայտված են այնպիսի երկրներում, որտեղ երիտասարդ բնակչության տեսակարար կշիռը մեծ է և աճում է ավելի արագ տեմպերով, քան առկա աշխատատեղերն են: 2018–2019 թթ. հետազոտությունները[17] ցույց են տալիս, որ Արևմտյան Բալկանյան երկրներում երիտասարդների արտագաղթի գլխավոր դրդապատճառներն են կենսամակարդակի բարելավումը, զբաղվածության ավելի լավ հնարավորությունները և ավելի բարձր աշխատավարձը: Ավելի լավ կրթություն ստանալու շարժառիթն իր կարևորությամբ երկրորդն է, սակայն նշանակալիորեն զիջում է տնտեսական գործոններին[18]: Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացված հետազոտության արդյունքներով՝ երիտասարդների արտագաղթի գլխավոր շարժառիթները բարձր գործազրկությունը, ցածր աշխատավարձն ու սոցիալական երաշխիքների

---

[14] Տե՛ս IOM, UN Migration, World Migration Report 2022, էջ 23-24:

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 25:

[16] Հաշվարկը կատարել է հեղինակը՝ ըստ United Nations Department of Economic and Social Affairs (UN DESA), International Migrant Stock 2020, Population Division, New York: Տե՛ս https://www.un.org/development/desa/pd/content/international-migrant-stock

[17] Սույն հետազոտության շրջանակներում ներկայացված են Արևմտյան Բալկանյան, Բալթյան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի երկրների տվյալները՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տասնամյակում, սոցիալ-տնտեսական դրդապատճառներով պայմանավորված, աճել են այս երկրներից արտագաղթի տեմպերը, որի գերակշիռ մասը կազմել են 20–39 տարեկան համեմատաբար բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները: Ընդ որում, արտագաղթը եղել է երկարաժամկետ, կայուն և քիչ վերադարձով:

[18] Տե՛ս **Esch V., Palm V., Brey H., Hagemann C.,** Emigration From the Western Balkans, Aspen Institute Deutschland, 2020, էջ 24:

բացակայությունն են[19]: Բալթյան երկրներում նույնպես արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների պակասն է երիտասարդների արտագաղթի հիմնական գործոնը: Չնայած 2009–2019 թթ. այս երկրներում նվազագույն աշխատավարձը գրեթե կրկնապատկվել է (թեև դեռևս հետ է մնում ԵՄ անդամ զարգացած երկրների աշխատավարձից), որն էլ հանգեցնում է դեպի այդ երկրներ արտագաղթի աճի: Երկրորդ ամենակարևոր դրդապատճառը առողջապահական ծառայությունների և սոցիալական պաշտպանվածության ոչ պատշաճ մակարդակն է[20]:

Ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարելու և մրցունակ լինելու անհրաժեշտությունը երիտասարդների համար կարևոր է դարձնում որակյալ կրթություն ստանալը, որը երբեմն հնարավոր չէ իրականացնել հայրենիքում, ինչն էլ հանգեցնում է երիտասարդների արտագաղթի: Դրան նպաստում են նաև ուսանողների փոխանակման ծրագրերը, որոնք յուրօրինակ հնարավորությունների պատուհան են երիտասարդների համար: Վերջին 20 տարիների ընթացքում ուսանողների միջազգային շարժունության աննախադեպ աճ է արձանագրվել. 2000–2020 թթ. արտասահմանցի ուսանողների թիվը 2 միլիոնից հասել է 6.4 միլիոնի[21]: 2000 թվականից ի վեր ՀՀ-ում ուսանողների միջազգային շարժունությունն աճել է 49,3%-ով. 2022 թ. կազմել է 6735[22]: Erasmus+ շարժունության ծրագրերի շնորհիվ հետսոցիալիստական երկրները դարձել են դեպի ԵՄ երկրներ երիտասարդների միգրացիայի հիմնական դոնոր պետություններ: Ի դեպ, այն երիտասարդները, որոնք կրթություն ստանալու նպատակով գտնվել են արտերկրում, դրսևորում են արտագաղթելու նշանակալի բարձր հակվածություն: Կրթությունը երիտասարդների միգրացիայի վրա երկակի ազդեցություն է ունենում. մի կողմից՝ երկրում կրթական բարձր մակարդակն է միգրացիայի դրդապատճառ հանդիսանում, մյուս կողմից՝ երիտասարդներն արտագաղթում են ավելի որակյալ կրթություն ստանալու ակնկալիքով:

Պետությունը հսկայական ծախսեր է կատարում բարձրագույն կրթության ապահովման համար, որն ավարտվում է կրթված երիտասարդների արտագաղթով. փաստորեն, պետությունն անվճար մարդկային կապիտալ է մատակարարում աշխարհին: Օրինակ՝ Բոսնիան և Հերցեգովինան տարեկան ավելի քան 50 մլն եվրո է ծախսում առողջապահության ոլորտի մասնագետներ պատրաստելու համար, որոնք աշխատում են ԵՄ-ում[23]:

Երիտասարդների արտագաղթի ամենաազդեցիկ պատճառներից են կլիենտելիզմն ու կոռուպցիան: Օրինակ՝ Արևմտյան Բալկանյան երկրներում երիտասարդների մեծամասնության կարծիքով, այստեղ աշխատանք գտնելու ուղին քաղաքական կուսակցություններին անդամակցությունն է: Ավելին,

---

[19] Տե՛ս UN, International Organization for Migration Subregional, External Youth Migration in the Countries of Central Asia: Risk Analysis and Minimization of Negative Consequences, 2019, էջ 38-39:

[20] Տե՛ս https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas#:~:text=Another%20major%20concern%20driving%20emigration,to%20the%202018%20Eurobarometer%20survey.

[21] Տե՛ս https://www.migrationdataportal.org/themes/international-students

[22] Տե՛ս http://data.uis.unesco.org/index.aspx?queryid=3806

[23] Տե՛ս **Esch V., Palm V., Brey H., Hagemann C.,** նշվ. աշխ., էջ 13:

տարածաշրջանի քաղաքացիների 56%-ը հակված չէ վստահելու կամ առհասարակ չի վստահում իր կառավարությանը[24]: Կենտրոնական Ասիայի երկրներից Ղազախստանում հարցվածների կեսից ավելիի պնդմամբ հայրենիքը լքելու հիմնական պատճառներից են կոռուպցիան, բյուրոկրատիան, քաղաքական գործիչների անպատժելիությունն ու անարդյունավետ կառավարումը, իսկ Տաջիկստանում երիտասարդների արտագաղթի վրա համանման ազդեցություն են ունենում գործազրկությունն ու ցածր աշխատավարձը[25]:

Պատերազմների և հակամարտությունների ժամանակ արտագաղթում են հիմնականում դեռահասներն ու երիտասարդները, որոնք ենթակա են պարտադիր զորակոչի: Նրանք նաև տարբեր տիպի բռնությունների զոհ են դառնում: Օրինակ՝ Էրիթրեայում երիտասարդների համար արտագաղթն ընկալվում է որպես անժամկետ զորակոչից և ձգձգվող ճգնաժամից փրկվելու միակ միջոցը: Սիրիայից երիտասարդների արտագաղթի պատճառ են հանդիսացել պատերազմն ու ընդհատված կրթությունը[26]:

Ծագման երկրներում երիտասարդների միգրացիայի կարգավորման պետական քաղաքականությունների միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդների արտագաղթի կարգավորման պետական քաղաքականության հիմնական ***նպատակները*** պետք է լինեն.

1. երիտասարդ և որակյալ աշխատուժի արտագաղթի կանխարգելումը,
2. հայրենիքից հեռացած որակյալ աշխատուժի վերադարձի ապահովումը,
3. սփյուռքի միջոցով ձևավորվող ցանցերի օգտագործումը,
4. մարդկային կապիտալի կորստից առաջացած վնասը տնտեսության համար օգուտի վերածելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երիտասարդների արտագաղթի գլխավոր դրդապատճառները տնտեսական ու սոցիալական բնույթի են, նրանց արտագաղթը կանխարգելելու և հայրենիքից հեռացած աշխատուժի վերադարձը ապահովելու նպատակների իրագործման համար դոնոր պետությունը պետք է սահմանի հետևյալ հիմնական ***թիրախները.***

- տնտեսական աճի և կայուն զարգացման ապահովումը,
- արժանապատիվ զբաղվածության ապահովումը,
- կրթության ոլորտի բարեփոխումները:

Կայուն և երկարատև տնտեսական աճը երիտասարդների արտագաղթը կանխարգելելու կարևորագույն պայմանն է, որը զբաղվածության հնարավորություններ է ստեղծում և կրճատում է եկամուտների խզումը ծագման և ընդունող երկրների միջև, խթանում է օտարերկրյա ուղղակի ներդրումները, արտադրողականությունը և տեխնոլոգիաների ու նոու-հաուների փոխանցումը: Կորեայում, Թայվանում, Իռլանդիայում, Իտալիայում, Հունաստանում,

---

[24] Տե՛ս նույն տեղը, էջ 44-45:

[25] Տե՛ս UN, International Organization for Migration Subregional, External Youth Migration in the Countries of Central Asia: Risk Analysis and Minimization of Negative Consequences, 2019, էջ 38-39:

[26] Տե՛ս **Belmonte M., Conte A., Ghio, D., Kalantaryan S., McMahon S.,** նշվ. աշխ., էջ 24:

Իսպանիայում և Պորտուգալիայում տնտեսական աճի տեմպերի կտրուկ աճը կրճատել է որակյալ աշխատուժի արտագաղթը[27]:

Արժանապատիվ զբաղվածության ապահովման թիրախը պետք է ներառի հետևյալ գործողությունները.

- աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություններ,
- դրամաշնորհների, սուբսիդիաների և կրթաթոշակների հատուկ սխեմաներ,
- աշխատողների իրավունքների պաշտպանություն,
- աշխատաշուկայում սոցիալական երկխոսության և կոլեկտիվ համաձայնագրերի ինստիտուտների դերի բարձրացում,
- զբաղվածության ֆորմալացում:

ՏՀԶԿ հետազոտության համաձայն[28]՝ երիտասարդների կայուն և հարմար զբաղվածության ապահովման առումով էական ազդեցություն ունեն զբաղվածության պետական ծառայությունները՝ նպաստելով աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի համապատասխանեցմանը: Արտագաղթի նպատակ չունեցող երիտասարդների տեսակարար կշիռն ավելի մեծ է այն երկրներում, որտեղ այսպիսի ծառայություններն արդյունավետ են իրականացնում զբաղվածության ապահովման իրենց գործառույթը: Կարևոր է երիտասարդների մասնագիտական վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որը, իհարկե, կարող է նաև բարձրացնել երիտասարդների մասնագիտական որակներն ու դրդել արտագաղթի: Ըստ նույն հետազոտության՝ մասնագիտական վերապատրաստման ծրագրերին մասնակցած երիտասարդներն իրենց երկրից արտագաղթելու ավելի մեծ հակվածություն են դրսևորում, քան նմանատիպ ծրագրեր չիրականացնող երկրների երիտասարդները: Հայաստանն այս երկրների շարքում բացառություն է, քանի որ նմանատիպ ծրագրերը կանխում են երիտասարդների արտագաղթը մեր երկրից:

Երիտասարդների շրջանում զբաղվածությունը և գործարար ակտիվությունը խթանելու և արտագաղթը կանխելու համար դոնոր երկրները կարող են սահմանել դրամաշնորհների, սուբսիդիաների և կրթաթոշակների հատուկ սխեմաներ: Օրինակ՝ Մոնտենեգրոյում, Հյուսիսային Մակեդոնիայում և Սերբիայում ներդրվել է երկակի կրթական համակարգ, ըստ որի՝ մասնագիտական կրթությունը զուգակցվում է մասնագիտական փորձառություն ձեռք բերելու հետ: ԵՄ երիտասարդների երաշխիքի համակարգի համանմանությամբ, 2018 թվականին Հյուսիսային Մակեդոնիան ներդրել է Երիտասարդների երաշխիքի սխեմա, որի նպատակն է ապահովել դպրոցից դեպի աշխատանք երիտասարդների սահուն անցումը, աջակցել աշխատաշուկային նրանց ինտեգրմանը և աշխատանքով ապահովմանը: Համակարգն ապահովում է, որ 29 տարեկանից ցածր տարիքի բոլոր երիտասարդները ստանան պատշաճ և ըստ մասնագիտության զբաղվածության, կրթությունը շարունակելու, մասնագիտական փորձառություն կամ պրակտիկա անցնելու

[27] Տե՛ս **Wickramasekara P.,** Perspectives on Labour Migration, 5 E, Policy Responses to Skilled Migration: Retention, Return and Circulation, ILO, 2002, էջ 9:

[28] Տե՛ս **Hall S.,** նշվ. աշխ., էջ 37-38:

առաջարկ՝ աշխատանքը կորցնելուն կամ ֆորմալ կրթությունը ավարտելուն հաջորդող 4 ամիսների ընթացքում[29]:

Զբաղվածության ապահովման քաղաքականությունների անքակտելի մասը պետք է կազմեն նաև աշխատողների իրավունքների պաշտպանությանը, ֆորմալ զբաղվածության խթանմանը և սոցիալական երկխոսության ու կոլեկտիվ համաձայնագրերի ինստիտուտների դերի բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Երիտասարդների միգրացիան կանխարգելելու պետության քաղաքականության հաջորդ թիրախը կրթության ոլորտի բարեփոխումներն են: Ձեռք բերված մասնագիտական հմտությունների և աշխատաշուկայի պահանջների միջև անհամապատասխանությունը վերացնելու համար անհրաժեշտ է բարելավել մասնագիտական կրթության ու վերապատրաստման ծրագրերը, հատկապես բուհերի մասնագիտական կրթական ծրագրերը, ներդրումներ իրականացնել «նոր տնտեսությունում» պահանջվող այնպիսի հմտությունների զարգացման մեջ, ինչպիսիք են նորաստեղծական, խնդիրներ լուծելու և նոր մարտահրավերներին ճկուն արձագանքելու ունակությունները: Հաջորդ ուղղությունը հետազոտության և մշակումների ծախսերի աճն է և կրթական ենթակառուցվածքների ստեղծումը: Օրինակ՝ Աֆրիկայից շատ երիտասարդների արտագաղթելու գլխավոր պատճառը հայրենիքում հետազոտություն իրականացնելու կամ իրենց հմտությունները ժամանակի պահանջներին համապատասխանեցնելու հնարավորությունների բացակայությունն է: Կրթական ենթակառուցվածքների ստեղծումը նույնպես կարող է կանխել երիտասարդների արտագաղթը: 1990-ականներին Չինաստանը, Կորեան և Հնդկաստանը մագիստրոսական կրթաձևում ներդրել են տեխնիկական վերապատրաստումների համակարգ, որի շնորհիվ 1997 թ. այս երկրներում տեխնիկական գիտությունների թեկնածուների թիվը գերազանցում էր ԱՄՆ-ում թեկնածուի աստիճան ստացած ասիացիների թվաքանակը[30]:

Կառավարությունը պետք է խթանի ընկերություններում իրականացվող վերապատրաստումները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերություններում վերապատրաստված կամ դրանց կողմից փոխհատուցվող վերապատրաստման ծրագրերի մասնակցած աշխատողները նույնպես կարող են արտագաղթել՝ ընդունող երկրների հետ կարելի է կնքել համաձայնագրեր ուսանողների՝ արտերկրում որոշակի վերապատրաստում անցնելու և պարտադիր հետ վերադառնալու պայմանների շուրջ: Նրանց համար դա կապահովի նաև արժանապատիվ աշխատանքային պայմաններ: Օրինակ՝ ըստ Դանիայի և Լեհաստանի առողջապահության նախարարությունների միջև կնքված համաձայնագրի՝ Դանիայի կառավարության պատվերով բուժքույրեր են պատրաստվում Դանիայի առողջապահական համակարգում աշխատելու համար՝ առավելագույնը 2 տարի ժամկետով, որից հետո նրանք պարտավոր են հետ վերադառնալ և վերաինտեգրվել Լեհաստանի առողջապահական համակարգին: Այս դեպքում կարող է կիրառվել նաև այլ տարբերակ, ըստ որի՝ նպատակակետ երկիրը ֆինանսավորում է որոշակի քանակությամբ մասնագետների վերապատրաստումն ըստ իր չափորոշիչների (որոնց

[29] Տե՛ս **Esch V., Palm V., Brey H., Hagemann C.,** նշվ. աշխ., էջ 45:
[30] Տե՛ս **Wickramasekara P.,** նշվ. աշխ., էջ 9:

պահանջարկը տվյալ պահին դոնոր երկրում առկա չէ), այնուհետև տրամադրում է վիզա հստակ ժամկետով՝ երաշխավորելով նրանց վերադարձը հայրենիք:

Միգրացիայի պետական քաղաքականության հաջորդ նպատակը արտագաղթած երիտասարդների վերադարձի ապահովումն է: Դրա հետ կապված՝ միջոցառումների թիրախում պետք է լինեն բարձր որակավորում ունեցող երիտասարդները, միևնույն ժամանակ, հարկ է անհրաժեշտ բոլոր պայմանները ստեղծել նրանց ներուժը լիարժեք օգտագործելու և «ուղեղների փոշիացում» թույլ չտալու համար: Պահանջվում է նաև մասնավոր հատվածի ակտիվ ներգրավվածությունը՝ հատկապես արտերկրից «head-hunting»-ում:

Արտերկրում կրթություն ստացած և վերապատրաստում անցած երիտասարդների հետ վերադարձը և վերաինտեգրումը սահուն և անխոչընդոտ կազմակերպելու համար անհրաժեշտ է ներդնել օտարերկրյա սերտիֆիկատները և աշխատանքային փորձառությունը ճանաչելու համակարգ, իսկ ծառայությունների ոլորտի աշխատողների համար հանել հայրենիքում պարտադիր սերտիֆիկատների և արտոնագրերի պահանջը:

Երիտասարդների հայրենիք վերադարձը խրախուսելու համար պետությունը կարող է նաև կիրառել հատուկ տրանսֆերտների համակարգ: Օրինակ՝ Էստոնիայում գործող «Համերկրացիների ծրագրի» համաձայն, հայրենիք վերադարձող էստոնացիները կարող են աջակցության նպաստ ստանալ Ինտեգրման և միգրացիայի հիմնադրամի «Մեր մարդիկ» ծրագրից, իսկ վերադարձող գիտնականները կարող են դրամաշնորհներ ստանալ[31]:

Վերադարձի նախաձեռնություններում պետությունը պետք է խիստ զգուշավոր լինի, քանի որ երբեմն կարող է ձախողել նաև ներմղման էֆեկտը: Օրինակ՝ Էստոնիայի «Bringing Talent Home» 2010-12 վերադարձի միգրացիոն նախաձեռնությունը չկարողացավ հասնել իր նպատակներին, փոխարենը սփյուռքի հայրենակիցների կողմից ընկալվեց որպես խիստ վիրավորական, քանի որ վերջիններս չկարողացան համապատասխանել ծրագրի պահանջներին:

Միգրանտների վերադարձը կարելի է ապահովել ժամանակավոր շրջանաձև միգրացիայի քաղաքականության շնորհիվ: Օրինակ՝ 2020 թվականին Կանադան և Անդորրան համաձայնագիր են կնքել՝ թույլ տալու 18–30 տարեկան երիտասարդներին աշխատել և ճանապարհորդել միմյանց երկրներում մինչև 1 տարի ժամկետով[32]: 2021 թ. Կանադան և Իտալիան երիտասարդների շարժունության համաձայնագիր են կնքել՝ 18–35 տարեկան երիտասարդներին թույլատրելու երկու անգամ մինչև 1 տարի ժամկետով ճանապարհորդել և աշխատել միմյանց երկրներում[33]: Երիտասարդների շարժունության համաձայնագիր ունեն նաև Պորտուգալիան և Անգոլան[34]: 2021 թ. Միացյալ Թագավորության և Հնդկաստանի միջև կնքված Երիտասարդ մասնագետների սխեմայի համաձայն՝ երկու երկրների երիտասարդ մասնագետները

[31] Տե՛ս https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas

[32] Տե՛ս https://www.canada.ca/en/immigration-refugees-citizenship/news/2020/06/canada-signs-new-youth-mobilityarrangement-with-andorra-in-a-virtual-ceremony.html.

[33] Տե՛ս https://www.canadianchamberinitaly.com/canada-and-italy-sign-new-youth-mobility-agreement

[34] Տե՛ս https://www.verangola.net/va/en/042021/Politics/25113/Portugal-is-discussing-visa-and-youth-mobility-agreements-withAngola.htm .

կարող են ապրել միմյանց երկրներում մինչև 2 տարի ժամկետով[35]:

Եթե պետությունը ձախողվում է երիտասարդների արտագաղթը կանխելու և նրանց վերադարձն ապահովելու նպատակների իրագործման գործընթացում, ապա պարտավոր է հաջողել մարդկային կապիտալի կորստից առաջացած վնասը տնտեսության համար օգուտի վերածելու գործում: Այդ նպատակի իրագործման հիմնական *թիրախները* պետք է լինեն.

- սփյուռքի հետ կապերի հաստատման ծրագրերը,
- արտագաղթած հայրենակիցների կողմից հայրենիքում ներդրումներ իրականացնելու համար նոր ֆինանսական ինստիտուտների, գործիքների և հնարավորությունների ստեղծումը,
- տեխնոլոգիաների և նոու-հաուների զարգացման ծրագրերի ներդրումը:

Առաջին թիրախն ապահովելու համար, օրինակ, Իռլանդիան և Լեհաստանը սփյուռքի հետ կապերի հաստատման ծրագրեր ունեն, որոնց շրջանակներում իրենց երկրից արտագաղթած քաղաքացիների շրջանում գովազդում են գործարարությամբ զբաղվելու և ներդրումներ իրականացնելու՝ հայրենիքում առկա հնարավորությունները: Օրինակ՝ 1990–2004 թթ. դեպի Իռլանդիա ներգաղթողների ¼-ը նախկինում արտագաղթածներ էին, որոնք հետ էին վերադառնում հայրենիք՝ երկրում առկա զբաղվածության հնարավորությունների մասին սփյուռքին տեղեկացնելու կառավարության ջանքերի, ինչպես նաև վերադարձողների հետ զբաղվածության և վերապատրաստման գործակալությունների կողմից իրականացված աշխատանքների շնորհիվ[36]: Ակնհայտ է, որ այստեղ հաջողելու համար պետությունը պետք է ստեղծի տվյալների բազաներ՝ տեղեկատվություն հավաքագրելով սփյուռքում գտնվող մասնագետների մասին և նրանց փոխանցի տվյալներ հայրենի աշխատաշուկայում առկա պահանջարկի վերաբերյալ: Օրինակ՝ Ալբանիան կազմակերպում է Սփյուռքի գագաթնաժողովներ՝ բարձրացնելու հայրենիքում ներդրումներ իրականացնելու առկա հնարավորությունների մասին սփյուռքի հայրենակիցների տեղեկացվածության մակարդակը: Լիտվայում գործում է Արտաքին գործերի նախարարության՝ արտերկրում ապրող լիտվացիների գծով վարչությունը, որը համակարգում է «Գլոբալ Լիտվայի սփյուռք» ծրագիրը 2011 թվականից: «Գլոբալ Լիտվայի առաջնորդներ» ոչ պետական կազմակերպությունը նույնպես աշխատում է սփյուռքի հետ, որին անդամակցում են 10.000-ից ավելի լիտվացի մասնագետներ 60-ից ավելի երկրներից[37]: Սփյուռքի ներգրավման պետական քաղաքականությունը և Լիտվայի գլոբալ առաջնորդները միասին իրականացնում են տարբեր ծրագրեր, որոնք խրախուսում են երիտասարդներին և մասնագետներին վերադառնալ և աշխատել Լիտվայում կամ հաղորդել իրենց ձեռք բերած գիտելիքներն ու փորձը: Ավելին, կառավարությունը գործարկել է «Ես ընտրում եմ Լիտվան» պաշտոնական կայքը, որը նվիրված է միգրանտների վերադարձի խթանմանը[38]:

---

[35] Տե՛ս https://www.gov.uk/government/news/uk-india-agree-partnership-to-boost-work-visas-for-indian-nationals

[36] Տե՛ս **Atoyan R., Christiansen L., Dizioli A., Ebeke Ch., Ilahi N., Ilyina A., Mehrez G., Qu H., Raei F., Rhee A., Zakharova D.,** Emigration and Its Economic Impact on Eastern Europe, IMF Staff Discussion Note, July 2016, էջ 31:

[37] Տե՛ս https://lithuanianleaders.org/

[38] Տե՛ս https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas

Երիտասարդ ուղեղների արտահոսքը անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն որպես կորուստ, այլև հնարավորություն. էմիգրանտների տեխնիկական և բիզնես հմտությունները, առևտրային կապերը և ֆինանսական կապիտալը կարելի է համարել երկարաժամկետ տնտեսական աճի աղբյուր՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների, վենչուրային ֆինանսավորման, ֆինանսական ներդրումների, առևտրային և կրթական փոխանակությունների շնորհիվ: Սփյուռքի ներուժն ի նպաստ տնտեսությանը ծառայեցնելու և սփյուռքից ներդրումներ ներգրավելու համար պետությունները ստեղծում են նաև նոր ֆինանսական ինստիտուտներ, գործիքներ և հնարավորություններ: Օրինակ՝ Ալբանիան և Սերբիան ստեղծել են Սփյուռքի զարգացման հիմնադրամներ, Սփյուռքի բանկեր, Սփյուռքի գործարար միություններ, որոնք իրականացնելու են սփյուռքի հայրենակիցների միկրովարկավորում, աջակցելու են սփյուռքի ներդրողներին և երաշխավորելու են ներդրումները սփյուռքից, բարելավելու են ձեռներեցությամբ զբաղվելու միջավայրը՝ կրճատելով նոր բիզնես սկսելու ծախսերը, աջակցություն են ցուցաբերելու բիզնես նախագծերի մշակման և իրագործման գործընթացներում: Կանադայում որոշ ժամանակ գործել են հարկային արտոնություններ վերադարձած էմիգրանտների ներդրումների համար[39]: Շրի Լանկայի՝ այլ երկրում բնակություն հաստատած քաղաքացիների կամ երկքաղաքացիություն ունեցող անձանց համար գործում է Ոչ ռեզիդենտների համար արտարժույթի սխեմա, որի համաձայն վերջիններս կարող են խնայողական կամ ընթացիկ հաշիվներ բացել Շրի Լանկայի բանկերում՝ արտարժույթով արտոնյալ տոկոսադրույքով և փոխանակման կուրսով[40]:

Երիտասարդ ուղեղների արտահոսքը կարող է նպաստել նաև տեխնոլոգիաների և նոու-հաուների զարգացմանը: Այդ նպատակով Թաիլանդում ստեղծվել է Thai Reverse Brain Drain Project-ը: Վերջինիս շրջանակներում հատուկ նախագծերի իրականացման համար ներգրավվում են արտերկրում գտնվող լավագույն մասնագետները/թիմերը՝ կարճաժամկետ այցելությունների և ինստիտուտների միջև կապեր ստեղծելու միջոցով խթանելով և համակարգելով տեխնոլոգիաների փոխանցումը, առաջարկելով դրամաշնորհային ծրագրեր, զբաղվածության երկարաժամկետ պայմանագրեր, մրցունակ աշխատավարձ[41]: Սփյուռքի գիտական ներուժն ի շահ պետության ծառայեցնելու համար երկրները նաև հնարավորություն են տալիս սփյուռքում գտնվող իրենց հայրենակիցներին հայրենի ուսումնական հաստատություններում հանդես գալու դասախոսություններով, կազմակերպելու աշխատաժողովներ, պետության ֆինանսավորմամբ հայրենիքում իրականացնելու համատեղ գիտական հետազոտություններ:

Եզրակացություններ: Երիտասարդների արտագաղթի շարժիչ ուժերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանց շարքում ամենաազդեցիկը սոցիալ-տնտեսական գործոններն են: Հայրենիքում արժանապատիվ կյանքի և

---

[39] Տե՛ս **Esch V., Palm V., Brey H., Hagemann C.,** նշվ. աշխ., էջ 94-100:

[40] Տե՛ս https://www.lolcfinance.com/savings-and-deposits/personal-foreign-currency-accounts-non-resident/#:~:text=PFCA%20Non%20Resident%20accounts%20are,eligible%20to%20open%20PFCA%20accounts

[41] Տե՛ս http://www.thailink.com/rbd.htm

զբաղվածության հնարավորությունների բացակայությունը երիտասարդների արտագաղթի գլխավոր շարժիչ ուժն է: Մասնագիտությամբ աշխատանք գտնելու հնարավորությունների բացակայությունը և/կամ թերզբաղվածությունը հանգեցնում են, այսպես կոչված, երիտասարդ «ուղեղների փոշիացման» կամ «ուղեղների արտահոսքի»:

Հաշվի առնելով երիտասարդների միջազգային միգրացիայի անընդհատ աճող տեմպերն աշխարհում՝ արտագաղթի ծագման երկրների համար ժամանակի հրամայական է դառնում երիտասարդների արտագաղթի կանխարգելման և ուղեղների շրջապտույտի ապահովման ռազմավարության մշակումը և արդյունավետ կիրարկումը: Քանի որ երիտասարդների միգրացիան ինչպես անհատի, այնպես էլ տնտեսությունների համար ոչ միայն մարտահրավեր է, այլև հնարավորություն, ուստի, ազգային մակարդակում խնդրի կարգավորման պետական քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի երիտասարդների միգրացիոն հոսքերի ծավալի ու կառուցվածքի կառավարմանը, գրավիչ միջավայր ստեղծելու ճանապարհով երիտասարդների արտագաղթը խոչընդոտելուն և որակյալ կադրերի վերադարձի ապահովմանը, արտագաղթի վնասները նվազագույնի հասցնելուն և օգուտները տնտեսական աճի վերածելուն:

Այսպիսով՝ երիտասարդների արտագաղթի կարգավորման համապարփակ քաղաքականության ուղղությունները պետք է լինեն.

- կայուն և ներառական տնտեսական աճի և զարգացման ապահովումը,
- արժանապատիվ զբաղվածության ապահովումը, այսինքն՝ ոչ միայն աշխատատեղերի ստեղծումը, այլև արժանապատիվ աշխատավարձի երաշխավորումը, ավելի լավ աշխատանքային պայմանների ձևավորումը և զբաղվածության ֆորմալացումը, աշխատողների աշխատանքային իրավունքների պաշտպանության երաշխիքների տրամադրումը և կոլեկտիվ բանակցությունների ինստիտուցիոնալացումը, աշխատաշուկայում մրցակցության ապահովումը և պետական հատվածում զբաղվածության ապաքաղաքականացումը,
- կրթական համակարգի բարեփոխումների իրականացումը և կրթական վերջնարդյունքների համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին,
- մասնագիտական կրթական համակարգի բարելավումը, դրա վարկանիշի, դերի ու երիտասարդների համար հասանելիության աստիճանի բարձրացումը,
- արտագաղթած երիտասարդների՝ հատկապես բարձր որակավորում ունեցողների վերադարձի համար խթանների և նախադրյալների ստեղծումը,
- սփյուռքի գիտական և ֆինանսական ներուժի օգտագործումը:

Ակնհայտ է, որ երիտասարդների միգրացիայի կարգավորման պետական քաղաքականության մշակումը պետք է լինի մասնակցային՝ ներգրավելով ներկայացուցիչների գործարար և ակադեմիական հանրույթներից, քաղաքացիական հասարակությունից և հենց երիտասարդությունից:

Օգտագործված գրականություն

1. African Union, African Youth Charter, Addis Ababa, 2006.
2. Atoyan R., Christiansen L., Dizioli A., Ebeke Ch., Ilahi N., Ilyina A., Mehrez G., Qu H., Raei F., Rhee A., and Zakharova D., Emigration and Its Economic Impact on Eastern Europe, IMF Staff Discussion Note, July 2016.
3. Belmonte M., Conte A., Ghio, D., Kalantaryan S., McMahon S., Youth and Migration: an Overview, Luxembourg: Publications Office of the European Union, 2020.
4. Castelli F., Drivers of Migration: Why do People Move?, Journal of Travel Medicine, 2018.
5. Czaika M., Reinprecht C., Drivers of Migration: A Synthesis of Knowledge, IMI Working Paper Series, No. 163, 2020.
6. Esch V., Palm V., Brey H., Hagemann C., Emigration From the Western Balkans, Aspen Institute Deutschland, 2020.
7. European Commission, SEC (2011) 401 Commission Staff Working Document on EU Indicators in the Field of Youth, Brussels: European Commission.
8. Global Migration Group, Migration and Youth: Challenges and Opportunities, Geneva, 2014.
9. Hall S., Youth, Migration and Development: A New Lens for Critical Times, KNOMAD PAPER 41, 2022.
10. IOM, UN Migration, World Migration Report 2022.
11. Raffaetà R., Baldassar L., Harris A., Chinese Immigrant Youth Identities and Belonging in Prato, Italy: Exploring the Intersections Between Migration and Youth Studies, Identities: Global Studies in Culture and Power 2015.
12. UN, International Organization for Migration Subregional, External Youth Migration in the Countries of Central Asia: Risk Analysis and Minimization of Negative Consequences, 2019.
13. United Nations Department of Economic and Social Affairs (UN DESA), International Migrant Stock 2020, Population Division, New York.
14. Wickramasekara P., Perspectives on Labour Migration, 5 E, Policy Responses to Skilled Migration: Retention, Return and Circulation, ILO, 2002.
15. http://data.uis.unesco.org/index.aspx?queryid=3806
16. http://www.thailink.com/rbd.htm
17. https://www.lolcfinance.com/savings-and-deposits/personal-foreign-currency-accounts-non-resident/#:~:text=PFCA%20Non%20Resident%20accounts%20are,eligible%20to%20open%20PFCA%20accounts.
18. https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas
19. https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas#:~:text=Another%20major%20concern%20driving%20emigration,to%20the%202018%20Eurobarometer%20survey
20. https://ec.europa.eu/assets/eac/youth/library/publications/indicator-dashboard_en.pdf

21. https://lithuanianleaders.org/
22. https://www.canada.ca/en/immigration-refugees-citizenship/news/2020/06/canada-signs-new-youth-mobilityarrangement-with-andorra-in-a-virtual-ceremony.html.
23. https://www.canadianchamberinitaly.com/canada-and-italy-sign-new-youth-mobility-agreement
24. https://www.gov.uk/government/news/uk-india-agree-partnership-to-boost-work-visas-for-indian-nationals
25. https://www.migrationdataportal.org/themes/international-students
26. https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas
27. https://www.un.org/esa/socdev/documents/youth/fact-sheets/youth-definition.pdf
28. https://www.verangola.net/va/en/042021/Politics/25113/Portugal-is-discussing-visa-and-youth-mobility-agreements-withAngola.htm

ТАТЕВИК МКРТЧЯН
Доцент кафедры экономической теории АГЭУ,
кандидат экономических наук

Вокруг проблемы международной миграции молодежи: глобальный вызов и возможности.– Наиболее выразительной особенностью глобального мира являются растущие темпы миграции, основными мотивами которой являются экономические, социальные и демографические проблемы, отсутствие доверия к государственным институтам, войны и вынужденные перемещения, насилие и проблемы безопасности, изменение климата и деградация окружающей среды. В настоящее время одним из наиболее опасных проявлений проблемы является эмиграция молодежи, особенно молодой квалифицированной рабочей силы, то есть «утечка мозгов». Основными причинами эмиграции молодежи являются отсутствие достойной работы на родине, невозможность обеспечить достойную жизнь себе и своей семье, неопределённость будущего проживания на родине, стремление получить более качественное образование, отсутствие возможностей для самореализации и роста, кредиты и долговые обязательства, брак и личные отношения, культура и возрастные переходы, войны и конфликты.

В данной статье проведен анализ причин эмиграции молодежи и мирового опыта государственной политики стран - доноров по предотвращению эмиграции и обеспечению репатриации. Учитывая тот факт, что миграция молодежи представляет собой процесс с двойным эффектом для всех сторон, следовательно, благодаря эффективной политике регулирования молодежной миграции со стороны стран происхождения, молодежная миграция может превратиться из вы-

зова в возможность. Таким образом, в статье представлен международный опыт государственной политики по предотвращению эмиграции молодежи и обеспечению возвращения эмигрантов, а также по превращению «утечки мозгов» в «выгоду от мозгов» и обеспечению циркуляции мозгов.

Ключевые слова: *миграция молодежи, утечка мозгов, государственная политика регулирования миграции молодежи*
JEL: F22, R23
DOI: 10.52174/29538114_2023.3-155

TATEVIK MKRTCHYAN
Associate Professor at the Chair of Theory of Economics, ASUE,
PhD in Economics

On the Issue of Youth International Migration: A Global Challenge and Possibilities.– The most distinctive feature of the world is the growing pace of migration, driven by motivations such as economic, social and demographic problems, lack of trust in state institutions, wars and forced displacements, violence and security issues, climate change and environmental degradation. Currently, one of the most dangerous manifestations of the problem is the emigration of young people, especially qualified young labor force, often referred to as "brain drain". The primary reasons for youth emigration include the lack of decent employment in the homeland, impossibility of securing a respectful living standard for themselves and their families, the uncertainty of the future, the desire to get better quality education, the lack of opportunities for self-realization and growth, loans and debt obligations, marriage and personal relationships, culture and age transition, wars and conflicts.

In this paper, an analysis of the reasons for youth emigration and the global experience of state policies by origin countries to prevent emigration and provide repatriation is carried out. Considering youth migration to be a process with double effects for all parties, youth migration regulation effective policies in place can transform youth migration from a challenge into an opportunity. Thus, the paper presents the international experience of state policies to prevent the emigration of young people and ensure the return of emigrants, as well as the policies of brain circulation to transform "brain drain" into "brain gain".

Keywords: *youth migration, brain drain, youth migration regulation policy*
JEL: F22, R23
DOI: 10.52174/29538114_2023.3-155